ԱՐՄԱՎԻՐԻ 1981—1982 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԴԵՎՈՐԳ ՏԻՐԱՑՅԱՆ, ԻՆԵՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1981—1982 թվականներին Արմավիրի պեղումները շարունակվեցին միջնաբերդում և քաղաքի արևմտյան ծայրամասի ագարակում։ Միջնաբերդում աշխատանքները կենտրոնացվեցին բլրի գագաթից դեպի արևմուտք տարածված, այսպես կոչված, մերձտաճարային համալիրում (նկ. 1)։ Շարունակվեցին մեծ միջանցքի պեղումները։ Սրա հարավային պատին հասնելուց հետո պարզ դարձավ, որ այն ուղիղ անկյան տակ թեքվում է դեպի արևելք։ Ի տարբերություն միջանցքի լայնության (2,60 մ), հարավային թևի լայնությունը ընդամենը 1,90 մ է։ Թևը պեղվեց մինչև վերջ, այսինքն մինչև այն արևելքից եզրափակող պատը, որով հնարավոր եղավ պարզել հարավային թևի երկարությունը՝ 8,20 մ (10, 80 մ)։ Սրանով ավարտվեցին միջանցքի պեղումները։ Պարզվեց, որ մեծ միջանցքն ունի մոտ 50 մ երկարություն, Π—աձև է և իր թևերի մեջ է առնում արդեն պեղված № 1 և № 2 սենյակները։ Միջանցքի 1982 թ. պեղված հարավային պատի մեջ պարզորոշ ուրվագծվում է դռան բացվածքը (լայնությունը՝ 1,10 մ), որը տանում է դեպի հարավային լանջում տեղադրված սենյակները։ Այդպիսով, իր հյուսիսային, արևմտյան, հարավային պատերի մեջ տեղադրված դռների օգնությամբ միջանցքը հաղորդակցվում էր համալիրի հյուսիսային, արևմտյան ու հարավային բաժանմունքների հետ, դրանք կապելով միմյանց։ Միջանցքի նոր բացված թևի հում աղյուսե պատերը նախկիններին նման վնասված էին միջնադարյան շինարարական գործունեության հետևանքով։ Միջնադարյան տնտեսական հորերն ու թոնիրները մխրճված էին աղյուսե շարվածքի մեջ, տեղ-տեղ հասնելով մինչև պատի քարե հիմքերը։

Արևելքից միջանցքը եզրափակող քարե ներքնամասի մեջ երևում էր լավ շարված առու (0,25 մ×0, 40 մ), որը հավանաբար գալիս էր հարևան՝ արևելյան սենյակից։ Միջանցքի այս թևի հատակին, պատերի քարե հիմքերի մակարդակին, պահպանվել են մեծ ժայռաբեկորներ, որոնք հնարավոր չի եղել հեռացնել միջանցքի այս մասը կառուցելիս։ Հարավային թևում գտնված իրերը խառն են՝ և ուրարտական են (որմնանկարների աննշան կտորներ, կավանոթների բեկորներ), և միջնադարյան (խեցեղեն, երկաթե դանակ, դրամ)։

Այսպես կոչված, որմնանկարներով դահլիճում (№ 4 սենյակ), որի պեղումները սկսվել էին նախորդ տարիներին, լավ երևացին հյուսիսային և արևելյան պատերի քարե ներքնամասերը։ Հայտնվել է աղյուսե վառված շերտ, բայց սենյակի հատակը դեռևս չի բացված։ Դահլիճի մեծությունը ենթադրել է տալիս, որ սենյակի մեջտեղում պետք է լիներ մեկ կամ երկու մույթ, սակայն մինչև օրս նման հետքեր չեն հայտնաբերվել։ Այս դահլիճում գտնվեցին ուրարտական կավանոթների բեկորներ, երկաթե գործիք և պատից ընկած ամբողջական մի աղյուս (չափերը՝ 48, 5 սմ×48,5 սմ×15,5 սմ)։ Ավարտվել են միջանցքին հյուսիսից հարող 9-րդ սենյակի դեռևս նախորդ տարիներին սկսած պեղումները, և ձեռնարկվել է հարևան № 11 սենյակի բացումը։ № 9 սենյակը միջանցքի հյուսիսային պատին հարող դռան երկու բացվածքների օգնությամբ հաղորդակցվում է հարևան № 8 և № 11 սենյակների հետ։ Հյուսիսային շարքի այս սենյակների պեղումներից պարզվեց, որ դրանց մի առանցքի վրա գտնվող դռներն ունեն քարաշեն հիմքեր, որոնք փաստորեն սենյակները իրարից բաժանող պատերի քարե ներքնամասերի շարունակությունն են կազմում։ 9-րդ սենյակում շերտը ակնհայտորեն ուրարտական է (կարմիր փայլեցրած ու անփայլ անոթների բեկորներով և այլ մնացորդներով), բայց հանդիպում են նաև հելլենիստական ժամանակաշրջանի բնակության հետքեր և միջնադարյան հո-

րերի նյութական մնացորդներ։ № 11 սենյակի վերևի շերտում գտնվեցին հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ նյութեր՝ կավե ու բարե անոթների ամբողջական նմուշներ ու բեկորներ։ Հավանաբար այս շերտին պետք է վերագրել քառակուսի, լավ թրծված փոքր աղյուսները, ինչպես նաև հյուսիսային պատի տակ գտնված երեխայի գանգը՝ ճակատին հարվածի հետքով։ Մոտավորապես նույն այս մակարդակում երևացին նաև միջնադարյան նյութեր, այդ

Նկ. 1. Արմավիրի մերձտաճարային համալիրի հատակագիծը։

թվում և դրամ, որոնք ամենայն հավանականությամբ հորերի մեջ են եղել։ Սենյակում շերտը գնալով ավելի որոշակի ուրարտական դարձավ։ Երևացել են վառված, ածխացած գերանների հետքեր, տուֆե խորանարդաձև քար՝ անցքով (նման քար արդեն գտնվել էր ամրոցի № 2 սենյակում)[1], որմնանկարների աննշան բեկորներ, խեցեղեն և ուլունք։ Սենյակի հատակը կառուցված էր մայր ժայռի վրա փռված ու տոփանված կավից։ Հյուսիսային այս սենյակներն իրար միացնող դռան բացվածքների շեմքերի մեջ երևացին քարերով շարված առու-

[1] Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան, Արմավիրի 1974—1976 թթ. պեղումները («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 285)։

ներ, որոնք մի սենյակից մյուսն էին դնում։ Դրանց նշանակությունը առայժմ պարզված չէ։

Համալիրի արևմտյան մասում պեղվեցին № 10 և № 12 սենյակները։ № 10 սենյակը (չափերը 3,50 մ×4,30 մ) հարում է արևելքից դեռևս նախորդ տարիներում բացված № 5, այսպես կոչված, փակեռով սենյակին։ Այդ տարիներին տողն բացվել էին հիշյալ սենյակները բաժանող պատը և նրա մեջ լավ ուրվագծվող դռան բացվածքը։ Նոր պեղվող սենյակի արևելյան մասը ավելի էր տևել միջնադարյան շինարարական գործունեության ընթացքում, իսկ ուրարտական պատը պահպանվել էր շատ ցածր մակարդակի վրա։ Այստեղ երևում էին միջնադարյան շինարարական գործունեության մի քանի մնացորդներ։ Օրինակ, դռան բացվածքի մեջ բավականին մեծ խորության վրա գրված էր միջնադարյան թոնիր։ Սենյակի սևեռմտյան պատի մեջ ուրվագծվեց մի նեղ դուռ (լայնությունը՝ 0,90 մ), մի հանգամանք, որն ակնարկում է այստեղ իրար մեջ բացվող, մի շարքի վրա գրված առնվազն երեք սենյակների գոյության մասին։ Սենյակի հատակին հայտնվել են մեծ քարեր, ոսկորներ և ուրարտական կավանոթների բեկորներ (սրանց մեջ կան նաև բարձրորակ կարմիր փայլեցրած)։ № 12 սենյակը (չափերը՝ 4մ×3,10 մ) զուգահեռ երկրորդ շարքը կազմող սենյակներից երրորդն է. նրա վերևի շերտերում բացվել է շատ մակերեսային մի թաղում՝ լավ պահպանված կմախքով։ Նույն վերևի շերտերում, հարավային պատի մոտ պեղվել է թոնիր՝ միջնադարյան խեցեղենով։ Ուրարտական շերտերում գտնվել են բրոնզե փակի ու ծղնիների բեկորներ (սրանք նման են նախորդ տարիներում № 5 սենյակում գտնվածներին), բոլորը կտրված վիճակում, մի հանգամանք, որը կարող է վկայել դռների՝ բռնությամբ բացելու մասին։

1981—1982 թթ. Արմավիրում գտնված ուրարտական նյութը ներկայացված է՝ 1. խեցեղենով, 2. մետաղե ու քարե իրերով և 3. զարդեղենով։ Խեցեղենը բաղկացած է սովորական խմբերից՝ օխրայագույն (դժգույն), կարմիր քսուկով պատած և քիչ փայլեցրած, մուգ կարմիր թանձր քսուկի շերտով պատած և գերազանց փայլեցրած։ Այն կարելի է բաժանել նաև հասարակ և բարձրորակ շքեղ խեցեղենի, իսկ ըստ օգտագործման՝ խոհանոցային, տնտեսության մեջ տարբեր կիրառություն գտնող և սեղանի սպասքի խեցեղեն։ Խոհանոցային օրինակներից են գորշավուն կամ բաց գույնի, մրոտած կճուճների շրթերի բեկորները (շրթերը դեպի դուրս ծռված, շրթի տակ դրսից ակոսով)։ Տնտեսության մեջ կիրառություն գտած անոթներից նախ պետք է նշել կարասները, որոնք ուրարտական, այդ թվում և Արմավիրի խեցեգործության բնորոշ տեսակներից են։ Գտնված բեկորները բաց գույնի են, բացառությամբ մի օրինակի, որը սև է։ Բեկորներից մեկը հաստապատ խոշոր կարասի պսակի մաս է, բարձր վզով և հարթ շուրթով։ Պսակի հիմքում պարանահյուս գոտի է անցնում։ Մյուս երկու բեկորներն ունեն թեթևակիորեն դեպի դուրս լայնացող կլոր շուրթեր և պսակի հիմքում կրում են մատներով կամ հատուկ ձողի ծայրով ճնշման եղանակով թաց կավի վրա արված պարանահյուս գոտիներ։ Մի մակերես ունեցող օրինակը կլորավուն, դեպի դուրս հակված շուրթ ունի։ Նախորդ բեկորների նման կարասը վիզ չունի և պսակից անմիջապես անցնում է իրանին։

Կոնքերը կամ տաշտերը հաստապատ մեծ ու խորը անոթներ են, դեպի դուրս կամ ներս հակվող կլորավուն կամ թմբիկավոր շրթերով. մի օրինակը դրսից ունի ակոսավոր գոտի։ Կոնքերից մեկի շրթի վրա աշտարակաձև դրոշմ է արված, իսկ մի ուրիշի իրանի ներքևի մասում սլաքաձև և խաչաձև նշան է փորագրված։ Գտնվել են գարեջրի պատրաստման սիգարաձև անոթների շրթերի ու իրանի տարբեր մասեր, նաև կավե կափարիչ, որի մեջտեղի հաստ սասը, բարականալով դեպի եզրերը, ավարտվում է ձևավորված շրթով. արտաքինը զարդարված է երեք համակենտրոն ակոսներով։

Արմավիրում գտնված ուրարտական սպասքի մեջ մտնում են կենցաղում կիրառված սեղանի ամանեղենը և հեղուկներ պահելու անոթները։ Սափորնե-

բը, կանթավոր կամ անկանթ, ներկայացված են սովորական կարմիր փայլեցրած, ինչպես նաև մուգ կարմիր լավ փայլեցրած բեկորներով։ Գտնվել են մեծ սափորի կանթ՝ մի ծայրում դրոշմված աշտարակաձև նշանով, բոլորաձև կամ ներճկված հատակների բեկորներ՝ փորագիր և դրոշմազարդ նշաններով, անկանթ գնդաձև սափորի վերևի մաս՝ թեթևակիորեն դեպի դուրս թեքվող շրթով և իրանի ու վզի միացման տեղում ռելիեֆ գոտիով։ Թասերը ներկայացված են տարբեր չափերի օրինակների բեկորներով։ Դրանք իրարից առանձնանում են հատկապես շրթերի ձևավորումով. դեպի ներս թեքված, հարթ կտրած շրթերով ու դրսից ակոսով թասեր. դեպի ներս հակված թմբիկավոր շրթերով ու իրանից դեպի շուրթը ընդգծված անցումներով թասեր։ Հատակները հարթ են կամ փոսորակ, երբեմն դրոշմազարդ (թռչուն) կամ փորագիր (խաչ) նշաններով։ Ուշադրության արժանի են նրբախեցի, բալի գույն ունեցող թասի շրթի բեկորը՝ դրսից ակոսներով, ուռուցիկ նեղ գոտիով զարդարված, և կլոր ուռուցիկ ոտքով կամ փոսորակ նստուկներով բեկորները։ Հանդիպում են նաև հորիզոնական, օղակաձև կանթերով թասեր։ Քրեդաններից մնացել են մուգ կարմիր հրաշալի փայլեցմամբ շրթերի ու իրանի բեկորներ, դրսից ուռուցիկ, նեղ գոտիներով ու ակոսներով հարդարված, ինչպես նաև հաստապատ նմուշների հարթ կամ փոս ընկած հատակների բեկորներ՝ փորագիր և դրոշմված նշաններով։ Ուռարտական խեցեղենի տեսականին լրացվել է ևս 2 նմուշով՝ թեյնիկանման (քթի մասը) և եղկանթանի պրոֆիլավորված իրանով անոթներով (եղկուսն էլ կլոր, տափակ հատակով)։ Ինչպես տեսանք, ուրարտական անոթներից շատերն ունեն փորագիր խաչերի ու սլաքների, նաև՝ դրոշմազարդ աշտարակաձև ու թռչնակերպ նշաններ։

Մետաղե իրերը, երկաթից, թե բրոնզից, ներկայացված են զենքերով, գործիքներով և զարդ փակերով ու ժզնիներով։ Վերջիններս գտնվել են համալիրի արևմտյան մասի № 12 սենյակում։ Հաշվետու տարիներում գտնվել են երկու բրոնզե փակերի մնացորդներ. մեկի ծայրի մեծ օղակը՝ կոտրված ձողով հանդերձ (փոքր օղակը բացակայում է) և մյուսի մեծ օղակի բեկորները (նկ. 2)։ Պահպանվել են նաև երկու ժզնիների մնացորդներ՝ վերևի պայտաձև մասերը և կեռաձև ծայրերը, որոնք մտնում են դռան փայտե մասի մեջ (նկ. 2ա)։ Բրոնզե փակեր, նույն մետաղից պատրաստված ժզնիներով հանդերձ, գտնվել են նաև 1977 թ., նույն արևմտյան մասի № 5 սենյակում[2]։ Ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ այժմ պեղվել են վերևի մասը թերի, դեպի ներքև սրացող, ծայրը կոտրված երկաթե քառակող իրեր, որոնք հիշեցնում են ուրարտաասորեստանյան բրոնզե շքամեխերը՝ զիգատիները։ Զենքերից հիշատակության արժանի են նիզակի երկաթե ծայրը, որից պահպանվել է միայն շեղբի մասը՝ միջնաջիղով և կեռ դանակը՝ առանց շեղբի ծայրի ու դաստակի վերին մասի։ Դաստակի պահպանված մասի վրա երևում են դաստապանակը պահող գամերը։ Սկյութական տիպի բրոնզե նետասլաքը եռաթև է, սնամեջ պոչուկով[3]։ Քարից պատրաստված իրերից են դրանիտե խորանարդաձև կոկիչը և տուֆե մեծ խորանարդը՝ միջանցիկ անցքով, նման մինչ այդ Արմավիրում գտնվածներին։ Այն հավանաբար օգտագործվել է ջրամատակարարման նպատակով։

Զարդեղեններից ուշադրության արժանի են ապակե բլթակավոր և սերդոլիկե գնդաձև ուլունքները։

Ուրարտական շերտի ուսումնասիրությունը բացահայտում է ամրոցի պատմության մի քանի առանձնահատկություններ։ Նախ՝ հնագիտական դտա-

---

2 Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան, Արմավիրի 1979—1980 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 1, էջ 91—92)։

3 Նման նետասլաքներ գտնվել են Կարմիր բլուրից, Հայկաբերդից և այլ հնավայրերից (տե ս Б. Б. Пиотровский, Кармир-блур, 1, Ереван, 1950, նկ. 55 (2), նույնի՝ Ванское царство, М., 1959, рис. 79в)

ծոների համեմատական սակավությունը հաստատում է այն տեսակետի ճշտությունը, ըստ որի մ. թ. ա. VIII դարում հիմնադրված մի շարք կարևոր կենտրոններ, ինչպիսիք են Տուշպան, Էրեբունին և Արգիշտիխինիլին, աստիճանաբար կորցնելով իրենց նշանակությունը (հատկապես մ. թ. ա. VII դարում), կարճ ժամանակով այն վերագտել են դարի վերջին, այսինքն՝ իրենց կործանման նախօրյակին։ Երկրորդ Արգիշտիխինիլիի, այդ թվում և նրա



Նկ. 2. Դոան փակի բեկոր։



Նկ. 2ա. Դոան ծղնիների բեկորներ։

արևելյան ամրոցի՝ Արմավիրի անկումը եղել է բռնի։ Դա երևում է արդեն հայտնի դարձած մի շարք հնագիտական դիտողություններից, որոնք հաստատող նոր իրեղեն ապացույցներ են հայտնաբերվել N 12 սենյակում։ Այնտեղ կոտրված վիճակում գտնված դոան փակերն ու ծղնիները վկայում են դուռը բռնի բացելու, իսկ սկյութական նետասլաքը՝ այդ բռնության հեղինակների մասին։

Վերջապես Արմավիրի շերտագրության առանձնահատկության հետ կապված մյուս դիտողությունը մեզ տանում է դեպի ամրոցի գոյատևման հաջորդ, հին հայկական՝ հելլենիստական ժամանակաշրջան։ Այդ մասին են վկայում հավալիրի հյուսիսային մասի № 11 սենյակի վերևի շերտում գտնվող նատուրարտական՝ հելլենիստական ժամանակաշրջանի նյութերը, որոնցից հատուկենտ նմուշներ հանդիպել են նաև հավալիրի մյուս մասերում։ Խոսքը նախ և առաջ խեցեղենի մասին է, ինչպես նաև՝ մետաղե ու քարե առարկաների։ Ամենահին խեցեղենը ներկայացված է մի շարք նմուշներով, մի քանիսը լավ պահպանված, ամբողջական կամ ամբողջացող։ Կարասներից մեկն ունի դեպի դուրս հեռացող, հարթ կտրված շուրթ, կարճ վիզ և վզի ու իրանի միացման մասում ուռուցիկ գոտի։ Ամենից երևում է, որ կարասի հաստ իրանը աստիճանաբար նեղացել է, անոթին տալով բավական ձգված տեսք և ավարտվել է հարթ, փոքր նստուկով։ Անոթը ծածկված է օխրայագույն քսուկով և թեթևակիորեն փայլեցված է։ Երկրորդ կարասի՝ վերևից հարթ կտրված շուրթը միացած է անմիջապես լայնացող իրանին, որն ունի մեծ նստուկ։ Պատրաստված է բավականին անփույթ, ավազախառն կավից։ Պեղումների ընթացքում ավելացավ սրածայր մեծ անոթների հատակների թիվը, որոնք նման են նախորդ տարիներում գտնված կարմիր փայլեցրած անոթների բեկորներին։ Կճուճներից մեկը հաստափոր է, ունի շատ ցածր վիզ և դեպի դուրս թերվող շուրթ ու փոքրիկ հաստ նստուկ. մակերեսի սևացած, մրոտած մասերը վկայում են, որ այն օգտագործվել է խոհանոցում։ Մյուս կճուճը բաց օխրայագույն է, ունի թմբիկավոր շուրթ, կարճ վիզ, ուռուցիկ իրան և ուսեր։ Սափորներից մեկն ունի ցածրադիր, գնդաձև իրան՝ եռաշուրթ պսակով։ Կանթը կտրվածքում կլոր է և ձգվում է շրթի ծայրից դեպի իրանի ուռուցիկ մասը։ Մի այլ սափորից պահպանվել է շրթի և վզի մասը՝ կանթի հետքերով (նկ. 3)։ Ջրամանը ուռուցիկ, հաստ իրանով, շատ նեղ վզով անկանթ անոթ է.

Նկ. 3. Արմավիրի միջնաբերդի անտիկ խեցեղենի և քարե սկահակի բեկորներ։

իրանը դրսից հարդարված է կարմիր գույնի շրջակենտրոն լայն գոտիներով, որոնք սակայն, տեղ-տեղ միանում են։ Կոնքերը լայնաշուրթ, դեպի դուրս հակված կամ ուղիղ պսակով խորոր անոթներ են։ Թասերը տարբերվում են շրթերի պրոֆիլավորմամբ։ Տափաշշի մի բեկորը ծածկված է շրջակենտրոն կարմրավուն գոտիներով (նկ. 3_1)։ Ըմպանակի հատակը օմֆալավոր է (հատակի մեջտեղը թմբիկ), իսկ սրվակի բեկորը կազմված է ուռուցիկ շերտերից։ Խեցին խիտ է և միատարր. կարելի է ենթադրել, որ այն բերովի իր է։

Քարե առարկաներից ուշադրության արժանի է կանաչավուն, մուգ և բաց շերտերով պորֆիրիտե սկահակի բեկորը (նկ. 3_2)։ Սկահակի շուրթը վերևից հարթ է, թեթևակիորեն դեպի դուրս ձգված. տակով արտաքին կողմից ակոս է անցնում, հատակը մեջտեղում հաստանում է, հավանաբար դեպի ոտքը անցնելու համար։ Նման սկահակները լայն տարածում ունեին հելլենիստական

ժամանակաշրջանում, այդ թվում և Արմավիրում[4]։ Մետաղե իրերից հարկ է նշել քառակող նետասլաքի բեկորը և տեգի ծայրը. երկուսն էլ երկաթից։

Արմավիրի բլուրի վրա առաջացած միջնադարյան շինությունների հետքերը լավ երևում են ուրարտական համալիրի վերին շերտերում, այդպես է և հաշվետու տարիներում բացված սենյակներում։ Միջնադարյան շինությունները խախտել են ոչ միայն ուրարտական սենյակների ներսը, այլև վնասել են դրանց կավաշեն պատերը։ Միջնադարյան նյութը ներկայացված է խեցեղենով, մետաղե իրերով և դրամներով։ Խեցեղենը բաժանվում է հասարակ և ջնարակած խմբերի։ Հանդիպում են կանթավոր և անկանթ խոհանոցային կճուճներ, փռված և խորը տեսակի քրեղաններ, կլոր շրթով, նեղ գոտիով ու լայն կանթով սափորներ, թռչունի պոչ հիշեցնող փորագիր և ծակոտկեն զարդերով պատած բռնակներով կափարիչներ։ Առանձնանում է բարձր, ուղիղ պսակով, կարմիր գույնով նեղկված կարասը՝ պսակը և իրանը հարդարված դաճաղարդ գոտիներով, որոնցից մեկը՝ այծերի, կենաց ծառի և թռչունների (ջայլամ) մոտիվներով։ Պեղվել են ձեռածեփ փորը անոթներ, ճրագ, աղաման։ Հետաքրքրություն է ներկայացնում բլուրի վրա պատահականորեն գտնված խեցու գոտեղարդ բեկորը, վրան ուղտերի և նրանց առաջնորդող մարդու պատկերով։ Ջնարակած խեցեղենը ներկայացված է ավանդական քրեղաններով, փոքր խուփի և թասի բեկորներով (մեկը բռնակով, մյուսը կանթով)։ Գերակշռում է կանաչ գույնի ջնարակը, բայց կան նաև դեղին, կապույտ միատարր և գարդարուն օրինակներ, այդ թվում անգորի հեռացման եղանակով ստացված բուսական և երկրաչափական զարդերով։ Գտնվել են հախճապակու երկու բեկոր, մեկը սպիտակ ֆոնի վրա բաց կապույտ ու սև գույնի բուսական զարդերով, մյուսը՝ արաբական տարրեր հիշեցնող ոսկեգույն նախշերով։

Մետաղե իրերից են աշխատանքային գործիքները՝ երկաթե մանգաղների և դանակների մնացորդներ, զենքեր, դաշույնի բեկորներ։ Զարդեղեններից գտնվել է բրոնզե օղակաձև առարկա և երկաթե փոքր մատանի։

Հաշվետու տարիներում հայտնաբերվել են երեք պղնձե դրամ[5], մեկը մակերեսից, երկուսը կացարաններում (համալիրի միջանցքի հարավային թևում և № 11 սենյակում)։ Դրանք սելջուկյան են և թվագրվում են XII—XIII դարերով։ Դրամները թողարկված են Փոքր Ասիայում, Ատրպատականում և կենտրոնական, բուն Իրանում (Ջեբալի նահանգ)։ Մեր կարծիքով դրամները արտացոլում են Արմավիրի միջնադարյան բնակավայրի գոյության վերջին փուլը, նախքան մոնղոլների կողմից նրա ավերումը։

Արմավիր քաղաքի ծայրամասում գտնվող հելլենիստական դարաշրջանի ագարակի պեղումները հաշվետու տարիներին կենտրոնացվեցին նախկինում պեղված մասից հյուսիս ընկած տարածքում (թթենուց հյուսիս)։ Այստեղ տեղանքը դիրքով ավելի ցածրադիր է, քան մինչ այդ պեղած մասերում, ուստի մշակութային շերտը ընկած է գետնի մակերեսից շատ ավելի խորը՝ 1,5 մ։ Մեկ տարվա ընթացքում բնակչությունը և բնական տարերքը խիստ վնասել էին 1980 թ. պեղված քառակուսիներում բացված պատերը։ Ավերածության հետքերը մաքրելուց հետո դրվեց 5 մ×5 մ չափի քառակուսի, որը պեղումների ընթացքում ընդարձակվեց դեպի արևմուտք և հարավ։ Հարավում սահմանը հասցվեց մինչև նախկինում բացված պատը և միացվեց նրանից արևելք ընկած 4 մ×3 մ չափերով տարածությանը։ Նշված տարածքում բացվեցին մի քանի պատեր, որոնք միմյանցից տարբերվում են շինարարական տեխնիկայով և շերտագրական առումով։ Այսպես, գետնի մակերեսից 0,20 մ խորության վրա բացվեցին երեք իրար զուգահեռ, հյուսիսից հարավ ձգվող պատեր, որոնք կազմում են երկու իրար կից սենյակներ։ Այդ պատերը (հաստու-

---

[4] Տե՛ս Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира (ՀՍՍՀ Գիտություններ, 1969, № 4, էջ 171)։

[5] Դրամները որոշել է դրամագետ Խ. Մուշեղյանը։

թյուններ՝ 0,70 մ և 0,85 մ է) շարված են միջին և մանր չափերի քարերով, միմյանցից հեռու են 3,0 մ և 3,20 մ, որոնք հավանաբար սենյակների լայնությունն են կազմում։ Կից սենյակների երկարությունը դժվար է որոշել, քանի որ դրանց հարավային պատերը իսպառ ոչնչացված են, իսկ հյուսիսայինները, եթե պահպանվել են, կբացվեն միայն հաջորդ տարի։ Արևմտյան սենյակի կենտրոնական մասում բացվեց 1,10 մ×3,25 մ մակերեսով սալահատակ, որը նստած է մոխրի և խեցեղեն պարունակող 0,45 մ հաստությամբ շերտի վրա։ Սալահատակը գետնի մակերեսից 0,90 մ խորության վրա է։ Այս սենյակի արևելյան պատից 0,55 մ հեռավորության վրա, նրան զուգահեռ ձգվում է 2,60 մ երկարություն ունեցող միաշար պատ, որով ստեղծվել է կամ խոհանոց կամ մսուր։ Մսուրն ավելի հավանական է թվում, որովհետև սալահատակը մսուրից ցած է ընկած։

Նկ. 4. Արմավիրի հելլենիստական ժամանակաշրջանի ագարակի նյութերից։

Առաջին սենյակում, 0,90 մ խորության վրա, բացվեցին ստորին շերտին վերաբերող երկու՝ իրար հետ անկյուն կազմող պատեր, որոնց լայնությունը 0,85 մ է, շարված են բազալտե և տուֆե խոշոր բեկորներով։ Սրանցով կազմված սենյակի մի մասը, հավանաբար, ընկած է վերին շերտի 1-ին սենյակի արևելյան պատի տակ և նրա մյուս կողմը։ Պատերից պահպանվել է միայն մի շարք։

Սենյակներից հայտնաբերված են գլխավորապես խեցեղեն, աշխատանքային գործիքներ։ Խեցեղենը ներկայացվում է հելլենիստական դարաշրջանին

բնորոշ նմուշներով (նկ. 4)։ Գտնվել են գունազարդ և անզարդ ըմպանակների կիսագնդաձև, պրոֆիլավորված և այլ տեսակի թասերի, կարասների, կճուճների, պուլիկների, տափաշշերի, ճրագների, կոնքերի բեկորներ։ Հատկապես առատ են աղորիքները (ծակոտկեն բազալտից, որոնցից մեկը՝ լծակավոր), դրան տուֆե և բազալտե կոունկները, տուֆե բլիթաձև (սկավառակաձև) առարկաները, կոկիչները, ծեծիչները և այլն։

Չնայած շինարարական երկու տարբեր շերտերի առկայությանը, սենյակների առանձին մակարդակներից հայտնաբերված խեցեղենի մեջ զանազանություն չի նկատվում։ Միակ տարբերությունն այն է, որ 2-րդ սենյակում, սալահատակից ցած բնկած շերտում, խեցեղենի թե՛ տեսականին, թե՛ գունազարդ օրինակները ավելի առատ են։

Արմավիրի պեղումները շարունակում են լուսաբանել Արգիշտիխինիլի արևելյան ամրոցի, Արմավիր քաղաքի ու միջնադարյան բնակավայրի պատմությունը։

РАСКОПКИ АРМАВИРА В 1981—1982 гг.

ГЕВОРК ТИРАЦЯН, ИНЕССА КАРАПЕТЯН

Резюме

Раскопки были продолжены в цитадели, а также на территории усадьбы на западной окраине городских кварталов. В цитадели были завершены раскопки П-образного коридора так называемого прихрамового комплекса, а также раскрыты помещения со стенами из сырцовых кирпичей на каменном фундаменте. В них найдены бронзовые засовы и петли от дверей, бронзовая стрела скифского типа, керамика.

Найденный в верхних слоях помещений археологический материал эллинистического периода свидетельствует о том, что помещения были обжиты в последующие урартскому времени века.

На территории усадьбы раскопан новый участок, где обнаружены стены комнат, относящиеся к двум разным строительным периодам. Найденный здесь археологический материал, главным образом керамика, явно эллинистического времени.